

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՅԻՐԸ

«Գորիս» մասնաճյուղի ադմինիստրատոր
Լրիվ աշխատաժամանակ
անորոշ ժամկետով
ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Գորիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Գորիս» մասնաճյուղի ադմինիստրատորի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են մասնաճյուղի կողմից տրամադրվող վարկերի տվյալների մուտքագրումը համապատասխան ծրագիր և փաստաթղթաշրջանառության կազմակերպման աշխատանքների կոորդինացումը, հսկողությունը և իրականացումը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի և հաշվետվությունների պատրաստում,
- Ընկերության սեփականության իրավունքով պատկանող, կամ ծառայությունների մատուցման պայմանագրով Մասնաճյուղին ամրակցված տրանսպորտային միջոցների երթուղիների բաշխման իրականացում, կատարած վազքի հաշվառում և դրա հետ կապված տեղեկատվության գրանցումներ,
- «ԱՔՈՒԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի վարկային ռեգիստրի համակարգից վարկային պատմության հարցման կատարում և վերբեռնում համապատասխան դիրեկտորիայում,
- Վարկային, գրավի, երաշխավորության պայմանագրերի, համաձայնագրերի պատրաստում և ներկայացում ստորագրման,
- Հաճախորդներին տրամադրվող տեղեկանքների, քաղվածքների պատրաստում և տրամադրում,
- ՀԾ-Բանկ համակարգում հաճախորդների տվյալների և վարկերի վերաբերյալ տեղեկությունների մուտքագրման, վարկային պայմանագրերի պատրաստման գործընթացի բարելավման և օպտիմիզացման առաջարկների մշակում,
- Հեռախոսազանգերին պատասխանում, հաղորդագրությունների գրանցում և փոխանցում համապատասխան աշխատողին, փաստաթղթերի պատճենահանման, պատկերամուտի /scan/ աշխատանքների կատարում և նրանց պաշտպանվածության ապահովում, ինչպես նաև նամակագրության, հաճախորդների և աշխատակազմի հետ կապված հասարակական աշխատանքներ:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթություն,
- տվյալ պաշտոնում աշխատանքի փորձը ցանկալի է,
- հաղորդակցման հմտություններ,
- պատասխանատվություն, օպերատիվություն, ճշտապահություն,
- գործավարության կազմակերպման հիմունքների իմացություն,
- գործարար շփման վարվելակերպի իմացություն,
- հայերենի - ազատ տիրապետում, անգլերենը – ցանկալի է,
- MS Office, ՀԾ-Բանկ, Internet փորձառու օգտագործող:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Գորիս 3201, Գուսան Աշոտի փ. 24/6 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻՋԲԸ՝
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

06 օգոստոսի 2018
20 օգոստոսի 2018